

Դանիել Վարուժան

Ողորմություն

Սովամահ ժողովուրդին

– “Սովէ. հա՛ց, հա՛ց...” –
Ո՞վ կ'հեծե
Շեմին վըրա խըրճիթիս ո՞վ կը հեծե:
Սերըս մարած է օճախիս բոցին հետ.
Մեջս է մոխիր, շուրջըս մոխիր. օ՛հ, ի՛նչ շահ
Մոխիրներու վըրա արցունք սերմանել:
Բան մը չունիմ, բա՛ն մը. այսօր իմ վերջին
Լումայով թույն գընեցի,
Ներսը թույնս իմ կը շաղվեմ:
Վա՛ղը եկուր գերեզմնոց, ո՛վ Անոթի,
Բուքին մեջե, կանուխ, երբոր գյուղին շուրջ
Գայլերը դեռ կը հածին,
Վա՛ղը եկուր… պիտի ես
Շիրմիս մեջեն, իբրև հաց
Քերթողի սիրտս այդ մախաղիդ մեջ ձըգեմ.
Քերթողի սիրտս արյունդ, արյունն որբերուդ
Պիտի ըլլա ո՛րքան որ Վիշտըդ ապրի…
Վաղը եկուր գերեզմնոց, ո՛վ Անոթի:

Յատուկ Պոէմ